ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ (2000-21)

ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԵԱՆ (armanmaloyan@mail.ru)

ՄՈՒՏՔ

ՀՀ Վայոց Ձորի մարզը կազմաւորուել է 1995ին: Մարզն իր անունը ստացել է Մեծ Հայքի Սիւնիք նահանգի (աշխարհ) Վայոց Ձոր գաւառի անունից: Մարզը ներառում է Եղէգնաձորի եւ Վայքի նախկին վարչական շրջանները: Վայոց Ձորի մարզը բնակչութեան թուով ամենափոքր, ամենանօսր բնակեցուած եւ ամենաքիչ թուով բնակավայրեր ունեցող մարզն է: Վայոց Ձորի տարածքը շուրջ 2308 քառ. կմ է եւ կազմում է ՀՀի տարածքի շուրջ 7,7%ը: Մարզկենտրոնն է Եղէգնաձոր քաղաքը: Մարզն ունի 3 քաղաքային (Եղէգնաձոր, Ջերմուկ, Վայք) եւ 52 գիւղական բնակավայր (ընդամէնը՝ 55 բնակավայր): Վայոց Ձորի մարզում է գտնուում ՀՀի ամենագեղեցիկ՝ Ջերմուկի կամ «Ջրահարսի վարսեր» ջրվէժը: Սեւանայ լճի մակարդակի անկումը կանգնեցնելու նպատակով կառուցուեց 48,3 կմ երկարութեամբ Արփա-Սեւան ստորգետնեայ ջրատար փապուղին (1963-81), որը սկիզբ է առնում Կեչուտի ջրամբարից, իսկ ապա նաեւ Որոտան-Արփա փապուղին՝ 21,6 կմ երկարութեամբ (կառուցումն աւարտուել է 2004ին):

Վայոց Ձորի մարզը հիւսիսից սահմանակից է Գեղարքունիքի մարզին, հիւսիս-արեւելքից՝ Արցախին, հարաւ-արեւելքից՝ Սիւնիքի մարզին, հարաւից՝ Նախիջեւանին, արեւմուտքից՝ Արարատի մարզին:

Մարզի ամենամեծ քաղաքը մարզկենտրոն Եղէգնաձորն է:

Մարզի տարածքը կազմում է Հայ Առաքելական Եկեղեցու Վայոց Ձորի թեմը, որը հիմնուել է Գարեգին Բ.ի կոնդակով 2010 Դեկտեմբերի 10ին, երբ Վայոց Ձորի մարզը դուրս է բերուել Սիւնեաց թեմի կազմից եւ դարձել առանձին թեմ: Թեմի առաջնորդանիստը մարզկենտրոն Եղէգնաձորի Ս. Աստուածածին եկեղեցին է[1]: Վայոց Ձորի թեմի առաջնորդն է Աբրահամ արք. Մկրտչեանը (2010 Դեկտեմբերի 10ից առ այսօր), իսկ թեմի փոխառաջնորդն է Նորավանքի վանահայր Զարեհ վարդապետ Կաբաղեանը (2012 առ այսօր):

Վայոց Ձորի մարզը հարուստ է բնութեան եւ պատմամշակութային յուշարձաններով:

Դեռեւս վաղ միջնադարում ձեւաւորուած հայկական եկեղեցական ճարտարապետութիւնը հայոց բազմադարեայ մշակոյթի ինքնատիպ եւ կարե-

---

[1] Ա. Մալոյեան, Մ. Մակարեան, Օ. Դուդումեան, *Հայաստանի նշանաւոր վանքեր եւ եկեղեցիներ*, Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2020, էջ 154:

ւոր բնագաւառներից է: Հայկական եկեղեցական ճարտարապետութեան բազմաթիւ կառոյցներ աչքի են ընկնում իրենց իւրօրինակութեամբ, գեղարուեստական հարուստ աւանդների կիրառմամբ ու զարգացմամբ, ներքին ու արտաքին յարդարանքի ինքնատիպ լուծումներով, կառուցողական արուեստի բարձր մակարդակով:

Հայ միջնադարեան եկեղեցական ճարտարապետութեան պատմութեան մէջ, յիրաւի, պատուաւոր տեղ ունի Սիւնեաց ճարտարապետական դպրոցը՝ իր քանքարաշատ ճարտարապետերով, շինարար ու խաչքարագործ վարպետներով: Այս ճարտարապետական դպրոցի ներկայացուցիչները հայ միջնադարեան եկեղեցական ճարտարապետութեան անդաստանում թողել են անմար յիշատակ եւ հայ եկեղեցական ճարտարապետութիւնը հարստացրել գեղակերտ կոթողներով: Սիւնեաց ճարտարապետական դպրոցի եկեղեցական ճարտարապետութեան կառոյցներում ուշագրաւ եւ արժէքաւոր են նաեւ վայոցձորեան յուշարձանները, որոնք լրացնում եւ ամբողջացնում են Սիւնեաց ճարտարապետական դպրոցի յուշարձանահոյլը:

Յօդուածի շրջանակներում կը ներկայացնենք ՀՀ Վայոց Ձորի մարզի նորակառոյց եկեղեցիները (Վայքի Ս. Տրդատ, Մալիշկայի Ս. Աննա, Աղաւնաձորի Ս. Մարիամ, Մարտիրոսի Ս. Մարիամ Աստուածածին, Գնդեվազի Ս. Եղիշէ, Ելփինի Ս. Սարգիս, Կեչուտի Ս. Գայիանէ, Ջերմուկի Ս. Գայիանէ, Ռինդի Ս. Մարիամ Աստուածածին)՝ անդրադառնալով վերոյիշեալ եկեղեցիների ճարտարապետական ձեւերին, կառուցման պատմութեանը եւ յարակից այլ հարցերի:

1991ից յետոյ նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնում հայկական եկեղեցական ճարտարապետութիւնը վերածնունդ, ապա նաեւ վերելքի նոր շրջան ապրեց: ՀՀ մարզերում եւ քաղաքամայր Երեւանում կառուցուեցին նոր եկեղեցիներ: Անմասն չմնաց նաեւ Վայոց Ձորի մարզը:

ՎԱՅՔԻ Ս. ՏՐԴԱՏ ԵԿԵՂԵՑԻ

Վայքի Ս. Տրդատ եկեղեցին անուանակոչուել է քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակած հայոց մեծագործ արքայ եւ Հայ Առաքելական Եկեղեցու կողմից սրբադասուած Տրդատ Գ. Մեծի պատուին:

Վայքում եկեղեցի կառուցելու ծրագիրը կար դեռեւս 1990ից: Հոգելոյս Վազգէն Ա. ամենայն հայոց կաթողիկոսի օրօք կատարուել էր եկեղեցու հիմնարկէքի արարողութիւնը՝ Սիւնեաց թեմի առաջնորդ, Ասողիկ եպիսկոպոս Արիստակէսեանի ձեռքով[2], սակայն ֆինանսական միջոցների բա-

[2] «Հաղորդագրութիւն Սիւնեաց թեմից. հիմնարկէք Սուրբ Տրդատ եկեղեցուոյ», *Էջմիածին*, ԺԱ-ԺԲ:1993, էջ 15:

ցակայութեան պատճառով շինարարական աշխատանքներն ընդհատուել էին: Ս. Տրդատ եկեղեցու շինարարութիւնը վերսկսուեց 1998ին, ամերիկահայ բարերարներ Գալուստ եւ Էմմա Սողոյեան ամոլի հովանաւորութեամբ: Եկեղեցին կառուցուել է Հայաստանում քրիստոնէութեան ընդունման 1700ամեակի առթիւ: Ճարտարապետը Մայր Աթոռի երկարամեայ (1957-99) գլխաւոր ճարտարապետ Արծրուն (Արծրունի) Գալիկեանն է[3]: Կառուցման աշխատանքները վերահսկում էր ճարտարապետ Հրաչ Գասպարեանը, այնուհետեւ՝ Ռուբէն Ազատեանը եւ Սուրէն Գաթրճեանը: Ճարտարապետական յօրինուածքով՝ Ս. Տրդատը քառաթեւ կենտրոնագմբէթ եկեղեցի է, ունի մի խորան, որը նուիրուած է Ս. Աստուածածնին, փոքր գաւիթ, երկու աւանդատուն եւ փոքրիկ գմբէթներով երկու զանգակատուն: Եկեղեցին լուսաւորւում է գմբէթի 12 եւ եկեղեցու 24 լուսամուտների շնորհիւ, բացի դրանցից՝ եկեղեցին լուսաւորւում է նաեւ մէկ մեծ եւ չորս փոքր էլեկտրական ջահերով (հեղինակ՝ Լեւոն Պօղոսեան): Ս. Տրդատ եկեղեցին ներսից զարդարուած է չորս մեծ եւ մէկ փոքր սրբապատկերներով (պատկերուած են Տրդատ Գ. թագաւորի մկրտութեան, Յիսուսի Մկրտութեան եւ Յարութեան դրուագները, ինչպէս նաեւ Ս. Գայիանէ եւ Ս. Հռիփսիմէ կոյսերը, եկեղեցու նկարչական ձեւաւորումը կատարել է Ռոբերտ Կարապետեանը)[4]:

Եկեղեցին ունի երեք փայտաշէն դուռ (հեղինակ՝ Տիգրան Զէյթլեան): Արեւմտեան դուռը նուիրուած է եկեղեցու բարերար Գալուստ Սողոյեանին եւ կրում է հետեւեալ արձանագրութիւնը. «Դուռս այս յիշատակ է Գալուստ Սողոյեանի»: Հիւսիսային դուռը նուիրուած է լուսահոգի Մեսրոպ արք. Աշճեանին եւ ունի հետեւեալ արձանագրութիւնը. «Դուռս այս յիշատակ է Մեսրոպ արք. Աշճեանի 2000 թ.»: Եկեղեցու հարաւային դուռը նուիրուած է Էմմա Թապիպեան-Սողոյեանին եւ ունի հետեւեալ՝ «Դուռս այս յիշատակ է Էմմա Թապիպեան-Սողոյեանի 2000 թ.» արձանագրութիւնը:

Եկեղեցու հիւսիսային կողմում գտնւում է մկրտութեան աւազանը, որի վրայ գրուած է. «Կանգնեցաւ Մկրտութեան Աւազանս ի յիշատակ Տօքթ. Ստեփան Թապիպեանի 2000 թ.»:

Ս. Տրդատ եկեղեցու արեւմտեան կողմում՝ կենտրոնական դռան վերեւում, ագուցուած է եկեղեցու կառուցման մասին հետեւեալ արձանագրու-

---

[3] 1957ին երջանկայիշատակ Վազգէն Ա. կաթողիկոսի հրաւէրով Գալիկեանը ստանձնել է Ս. Էջմիածնի ճարտարապետի պաշտօնը եւ դարձել 1956ին ստեղծուած Մայր Աթոռի ճարտարապետական յանձնաժողովի անդամ: Նրա նախագծերով կառուցուել են բազմաթիւ հոյաշէն կառոյցներ (Վարազդատ Յարութիւնեան, «Մահ ճարտարապետ Արծրուն Գալիկեանի», *Էջմիածին*, Է-Ը:2004, էջ 181-82):

[4] «Օծուեց Վայքի Ս. Տրդատ նորակառոյց եկեղեցին», *Էջմիածին*, Ը:2000, էջ 4:

թիւնը. «Կառուցաւ Ս. Տրդատ եկեղեցիս արդեամբք Գալուստ եւ Էմմայ Սողոյեանների ի Տիթրոյթ ԱՄՆ: Ի հայրապետութեանն Տ. Տ. Գարեգնի Ա. կաթողիկոսին ամենայն հայոց եւ նորին յաջորդին Տ. Տ. Գարեգնի Բ. կաթողիկոսին ամենայն հայոց. յառաջնորդութեան Տ. Աբրահամայ եպիսկոպոսին Սիւնեաց ի փառաւորումն 1700ամեայ տարեդարձին Քրիստոնէութեան Հայոց. ճարտարապետ՝ Ա. Գալիկեան, կառուցող՝ Մ. Մկրտչեան: Ս. Սեղանս կանգնեցաւ ի յիշատակ Փառաւոն Սողոյեանի 2000 թ., կանգնեցաւ Մկրտութեան Աւազանս ի յիշատակ Տօքթ. Ստեփան Թապիպեանի 2000 թ.»[5]:

Վայքի Ս. Տրդատ եկեղեցին օծուել է 6 Օգոստոս 2000ին, Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսի ձեռամբ[6]:

Ս. Տրդատ եկեղեցին ունի չորս խորշ, որոնցից մէկում՝ եկեղեցու արեւմտեան դռան ձախ կողմում, տեղադրուած է հայոց Մեծ Եղեռնի զոհերի յիշատակին նուիրուած խաչքար: Եկեղեցին շրջապատուած է պտղատու եւ յարդարանքային ծառերով: Եկեղեցու տարածքում է գտնւում նաեւ Վայոց Ձորի թեմի փոխառաջնորդարանը, որը նոյնպէս կառուցուել է Գալուստ եւ Էմմա Սողոյեանների բարերարութեամբ:

2014 Մայիսի 25ին Վայքի Ս. Տրդատ եկեղեցու բակում կատարուել է Ս. Յարութիւն խաչքար-յուշակոթողի օծման կարգը[7]: Այդ շատ ինքնատիպ եւ գեղակերտ խաչքար-յուշակոթողն իր մէջ ամփոփում է հայ ժողովրդի հաւաքականութեան, միասնականութեան խորհուրդը եւ ներկայացնում է հայոց պատմութեան տարբեր ժամանակներում ու տարբեր տարածաշրջաններում ստեղծուած խաչքարերի կրկնօրինակներ: Յուշարձանը խորհրդանշում է հայոց միասնութեամբ հայ ազգի բռունցքուելը, բիւրեղացումը, զօրեղացումն ու յաւերժականութիւնը:

Մայիսի 25ին Ս. Տրդատ եկեղեցում նախ մատուցուեց սուրբ եւ անմահ պատարագ: Պատարագիչն էր Վայոց Ձորի թեմի փոխառաջնորդ, Զարեհ վրդ. Կաբաղեանը: Այնուհետեւ կատարուեց խաչքար-յուշակոթողի օծման կարգը, որին ներկայ էին Շիրակի թեմի առաջնորդ, Միքայէլ եպս. Աջապահեանը, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնից ուխտաւորաբար ՀՀում գտնուող Գեղամ արք. Խաչերեանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հո-

---

[5] «Վայքի Ս. Տրդատ եկեղեցի»՝ https://vayotsdzoritem.com/category/%D5%A9%D5%A5%D5%B4%D5%AB-%D5%AC%D6%80%D5%A1%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A2%D5%A1%D5%AA%D5%AB%D5%B6/page/352/ մատչում՝ 21.02.2020:

[6] «Օծուեց Վայքի Ս. Տրդատ նորակառոյց եկեղեցին», *Էջմիածին*, Ը:2000, էջ 3:

[7] «Ս. Յարութիւն» խաչքար-յուշակոթողի բացում (25.05.14) Վայոց ձոր (Վայք) Ս. Տրդատ եկեղեցի»՝ https://www.youtube.com/watch?v=j3yFp3x7n7o :

գեւոր կրթական հաստատութիւնների վերատեսուչ, Գէորգ եպս. Սարոյեանը, Վայոց Ձորի մարզպետ Էդգար Ղազարեանը, մարզային եւ քաղաքային իշխանութիւնների ներկայացուցիչներ, քաղաքապետեր եւ համայնքապետեր, ճեմարանի աւարտական լսարանի սաներ, հիւրեր ԱՄՆից, Ռուսաստանի Դաշնութիւնից, Կանադայից, Արցախից, բազմաթիւ ուխտաւորներ ՀՀ տարբեր մարզերից: Առաջինը թեմական առաջնորդ, Աբրահամ եպիսկոպոս Մկրտչեանը սրբալոյս միւռոնով օծեց խաչքարը, ապա միւս սրբազան հայրերը եւս օծեցին խաչքարը: Օծումից յետոյ նախ օրհնութեան խօսքով հանդէս եկաւ թեմական առաջնորդ Աբրահամ սրբազանը, հաւաստագիր յանձնեց խաչքար-յուշակոթողի բարերար Գրիգոր Պուշկինի Գրիգորեանին, այնուհետեւ ներկաներին մեկնաբանեց խաչքարի խորհուրդը, որը կանգնեցուած է ազգի օրհնութեան եւ պահպանութեան նպատակով: Ապա ելոյթներով հանդէս եկան Գեղամ սրբազանը, մարզպետ Ղազարեանը, Վայքի քաղաքապետ Յարութիւն Սարգսեանը, կոթողի հեղինակ, քանդակագործ Վարազդատ Յարութիւնեանը, 2013ին Վայքի Ս. Տրդատ եկեղեցու խաչքաւոր, Ս. Յարութիւն խաչքար-յուշակոթողի բարերար Գրիգորեանը: Տեղի ունեցաւ նաեւ պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Համլէտ Պետրոսեանի *Խաչքար* գրքի շնորհանդէսը: Գրքի բարերարը եւս Գրիգորեանն էր: Պետրոսեանը հանգամանօրէն ներկայացրեց իր հեղինակած գործը, որի բազում օրինակներ նուիրուեցին եկեղեցու բակում հաւաքուածներին:

Վայքի Ս. Տրդատ եկեղեցու ուխտի օրը եկեղեցու օծման օրն է՝ Օգոստոսի 6ը, ինչպէս նաեւ Հոգեգալստեան 5րդ Կիրակիին նախորդող Շաբաթ օրը, երբ Հայոց Եկեղեցին նշում է Ս. Տրդատ թագաւորի, Ս. Աշխէն թագուհու եւ Ս. Խոսրովիդուխտ կոյսի յիշատակը:

ՋԵՐՄՈՒԿԻ Ս. ԳԱՅԻԱՆԷ ԵԿԵՂԵՑԻ

Ջերմուկի Ս. Գայիանէ եկեղեցին կառուցուել է 2007ին՝ ՀՀ ազգային ժողովի պատգամաւոր, գործարար, «Ջերմուկ Գրուպ» ընկերութեան սեփականատէր, ծնունդով գնդեվազցի Աշոտ Արսէնեանի[8] եւ Արսէնեան եղբայրների հովանաւորութեամբ: Եկեղեցու հիմնարկէքը կատարուել էր դեռեւս 1999 Մայիսի 15ին[9]: Ս. Գայիանէ եկեղեցու հիմնարկէքը՝ 16 քարերը օրհնելու եւ օծելու հանդիսաւոր արարողութիւնը, կատարել էին Սիւնեաց թեմի առաջնորդ, Աբրահամ եպիսկոպոս Մկրտչեանը, Երուսաղէմի հայոց

[8] «Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակը Աշոտ Արսէնեանին «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով պարգեւատրելու մասին», *Էջմիածին*, ԺԱ:2007, էջ 65-66:

[9] Բորիս Քոչարեան, «Ջերմուկում հիմքը դրուեց նոր եկեղեցու», *Էջմիածին*, Ե-Զ:1999, էջ 151:

պատրիարք, Թորգոմ արք. Մանուկեանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ, Զաւէն արք. Չինչինեանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ, Գիսակ արք. Մուրադեանը: Ս. Գայիանէ եկեղեցին օծուել է 2007 Նոյեմբերի 17ին՝ Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսի հանդիսապետութեամբ[10]:

Ս. Գայիանէ եկեղեցին կառուցուել է ճարտարապետ Սամուէլ Աղաջանեանի նախագծով: Եկեղեցին պարզ գմբէթաւոր փոքրիկ կառոյց է, ունի մէկ խորան, մկրտութեան աւազան, երկու աւանդատուն, երկու փայտաշէն դռներ՝ արեւմտեան եւ հարաւային կողմերում: Եկեղեցին լուսաւորւում է գմբէթի 12 եւ եկեղեցու 8 նեղ ու փոքրիկ լուսամուտների ու մէկ մեծ ջահի շնորհիւ: Եկեղեցին ներսից զարդարուած է վեց մեծ սրբապատկերներով (Քրիստոսի խաչելութեան, հայոց դարձի, Աստուածածնի եւ Ս. Գայիանէ կոյսի պատկերներ): Գմբէթի վեղարի ու չորս սիւների միջեւ պատկերուած են չորս աւետարանիչների որմնանկարները, իսկ գմբէթի մէջ գրուած է. «Փառք Քեզ Տեր Աստուած մեր, որ լսեցիր մեր աղօթքը»[11]:

ԿԵՉՈՒՏԻ ՍՈՒՐԲ ԳԱՅԻԱՆԷ ՄԱՏՈՒՌ

Ջերմուկ քաղաքի վարչական սահմանների մէջ ներառուած Կեչուտ գիւղում՝ հենց ջրամբարի ափին, 2007ին կառուցուել է մատուռ՝ Ս. Գայիանէ, որն օծուել է Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսի ձեռքով Նոյեմբերի 17ին[12], այսինքն, հենց այն նոյն օրը, երբ օծուել է Ջերմուկի նոյնանուն եկեղեցին: Ս. Գայիանէ մատուռը գմբէթաւոր է, ունի մէկ խորան, մկրտութեան աւազան: Մուտքն արեւմտեան կողմից է: Մատուռը լուսաւորւում է 9 փոքրիկ լուսամուտների շնորհիւ: Մատուռի օծման արարողութիւնից յետոյ հայոց կաթողիկոսը մեկնել է Ջերմուկ, ապա եւ կատարել Ջերմուկի Ս. Գայիանէ եկեղեցու օծման արարողութիւնը: Ս. Գայիանէ մատուռը կառուցուել է ճարտարապետ Լեւոն Օհանեանի նախագծով, կառու-

---

[10] «Ամենայն հայոց կաթողիկոսը օծեց Ջերմուկի Ս. Գայիանէ եկեղեցին», *Էջմիածին*, ԺԱ:2007, էջ 150:

[11] https://vayotsdzoritem.com/2012/11/03/%D5%BB%D5%A5%D6%80%D5%B4%D5%B8%D6%82%D5%AF%D5%AB-%D5%BD%D5%B8%D6%82%D6%80%D5%A2-%D5%A3%D5%A1%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A5-%D5%A5%D5%AF%D5%A5%D5%B2%D5%A5%D6%81%D5%AB-2/ մատչում՝ 03.03.2020:

[12] «Ամենայն հայոց կաթողիկոսը օծեց Ջերմուկի Ս. Գայիանէ եկեղեցին», *Էջմիածին*, ԺԱ:2007, էջ 150. նաեւ՝ https://vayotsdzoritem.com/2012/09/15/%D5%AF%D5%A5%D5%B9%D5%B8%D6%8.2%D5%BF%D5%AB-%D5%BD%D5%B8%D6%82%D6%80%D5%A2-%D5%A3%D5%A1%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A5-%D5%B4%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%BC/ մատչում՝ 03.03.2020:

ցող վարպետը Եուրի Առաքելեանն է, Մատուռի կառուցման հովանաւորը՝ Ալիկ Յովհաննիսեանը[13]:

Ջերմուկի Ս. Գայիանէ եկեղեցու եւ Կեչուտի Ս. Գայիանէ մատուռի ուխտի օրերն են՝ օծման օրը՝ Նոյեմբերի 17ը եւ Ս. Գայիանէ կոյսի յիշատակման օրը, որը Հայ Առաքելական Եկեղեցին տօնում է Կաթողիկէ Ս. Էջմիածնի տօնի[14] նախընթաց Երեքշաբթի օրը:

ՄԱԼԻՇԿԱՅԻ Ս. ԱՆՆԱ ԵԿԵՂԵՑԻ

Վայոց Ձորի մարզի նորակառոյց եկեղեցիներից է Մալիշկա գիւղի Ս. Աննա եկեղեցին: Ս. Աննա եկեղեցու կառուցումը հովանաւորել է հայ գործարար, «Ռուսաստանի հայերի միութիւն» ՀԿի նախագահ Արա Աբրահամեանը[15]: Բարձունքին փառահեղ բազմած նորակառոյց եկեղեցու հիմնարկէքը կատարուել է 1997ին: Բազալտակերտ եկեղեցին կառուցուել է ճարտարապետ Արծրուն Գալիկեանի նախագծով: Ս. Աննա եկեղեցին միախորան կենտրոնագմբէթ քառաթեւ կառոյց է՝ զոյգ աւանդատներով, որոնցից մէկը մոմավառութեան համար է օգտագործւում: Ունի երկու մուտք՝ եկեղեցու արեւելեան ու հարաւային կողմերից:

Ս. Աննա եկեղեցին ներսից գրեթէ ամբողջովին զարդարուած է որմնանկարներով: Խորանի վերեւում՝ պատի վրայ, պատկերուած է Ս. Հոգու աղաւնակերպ էջքի տեսարանը, իսկ գմբէթը պահող չորս կամարների անկիւններում պատկերուած են Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս աւետարանիչները: Եկեղեցու պատերը զարդարում են Քրիստոսի ծնունդը, մկրտութիւնը, խաչելութիւնը, հրեշտակի կողմից Քրիստոսի յարութեան աւետումը, ինչպէս նաեւ Թադէոս եւ Բարթուղիմէոս առաքեալներին, հայոց դարձը, գրերի գիւտը եւ Լուսաւորչի տեսիլքը պատկերող որմնանկարները: Եկեղեցու ներքին յարդարանքին առանձնակի շուք է հաղորդում Աստուածածնի մօր՝ սուրբ Աննայի որմնանկարը:

Եկեղեցին լուսաւորւում է գմբէթի ութ եւ եկեղեցու երեսուն լուսամուտների, ինչպէս նաեւ հինգ էլեկտրական ջահերի շնորհիւ:

---

[13]https://vayotsdzoritem.com/2012/09/15/%D5%AF%D5%A5%D5%B9%D5%B8%D6%82%D5%BF%D5%AB-%D5%BD%D5%B8%D6%82%D6%80%D5%A2-%D5%A3%D5%A1%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A5-%D5%B4%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%BC/ առ 03.03.2020

[14] Կաթողիկէ Ս. Էջմիածնի տօնը նուիրուած է Ս. Էջմիածնի Մայր տաճարի հիմնադրմանը եւ նշւում է Ս. Յարութեան տօնից՝ Զատկից, 9 շաբաթ (63 օր) յետոյ կամ Հոգեգալստեան Կիրակիին յաջորդող երկրորդ Կիրակի օրը:

[15] «Ձեռամբ վեհափառ հայրապետի օծուեց Մալիշկայի Ս. Աննա եկեղեցին», *Էջմիածին*, ԺԱ:2000, էջ 55:

Մալիշկայի Ս. Աննա եկեղեցու օծման հանդիսաւոր արարողութիւնը կատարուել է 2000 Նոյեմբերի 4ին ձեռամբ Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսի եւ սրբազան հայրերի: Արարողութեանը մասնակցելու նպատակով Մալիշկա էին ժամանել ՀՀ ԱԺ նախագահ Արմէն Խաչատրեանը, Երեւանի քաղաքապետ Ալբերտ Բազէեանը, «Ռուսաստանի հայերի միութեան» պատուիրակութիւնը, ՌԴ պետդումայի փոխխօսնակ Արթուր Չիլինգարովը, մեծաթիւ հիւրեր ու բազմահազար ժողովուրդ:

Վեհափառ հայրապետը Ս. Աննա եկեղեցուն նուիրել է Ս. Հոգու խորհրդանիշ միւռոնաթափ աղաւնի: Սրբազան արարողութեան աւարտին կատարուել է մկրտութիւն: Եկեղեցու բակում կատարուել է նաեւ ծառատունկ, որը կազմակերպել էր «Հայաստան-ծառ» ամերիկահայ կազմակերպութիւնը[16]:

Ս. Աննա եկեղեցին շրջապատուած է պտղատու եւ յարդարանքային ծառերով: Եկեղեցու բակում կանգնեցուած է հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամութիւնը յաւերժացնող աղբիւր-յուշարձան՝ հայերէն եւ ռուսերէն արձանագրութեամբ:

Եկեղեցու տարածքում գործում է հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամութեան թանգարանը:

Մալիշկա գիւղի Ս. Աննա եկեղեցու անուանակոչութեան օրը նշւում է Աստուածամօր ծնողների եւ իւղաբեր կանանց յիշատակութեան օրը[17], մատուցւում է սուրբ պատարագ:

ԱՂԱՒՆԱՁՈՐԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Վայոց Ձորի մարզի յաջորդ նորակառոյց քրիստոնէական պաշտամունքային կառոյցը Աղաւնաձոր գիւղի Ս. Աստուածածին եկեղեցին է:

Աղաւնաձորի Ս. Աստուածածին եկեղեցու կառուցման նախաձեռնողը Մոսկուաբնակ աղաւնաձորցի գործարար Մուրադ Սարգսեանն է: Եկեղեցու հիմնարկէքը 2000 Փետրուարին կատարել է Սիւնեաց թեմի առաջնորդ, Աբրահամ եպս. Մկրտչեանը[18]: Գիւղի բարձունքին վեհօրէն բազմած Ս. Աստուածածին եկեղեցին քառաթեւ կենտրոնագմբէթ փոքրաձաւալ կառոյց է: Եկեղեցու ճարտարապետը Սարգիս Գուրզադեանն է:

Եկեղեցու օծման արարողութիւնը կատարուել է Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսի հանդիսապետութեամբ 2001 Յուլիսի 7ին: Այդ օրը

---

[16] Նոյն:

[17] Հայ Առաքելական Եկեղեցին Աստուածածնի ծնողների՝ Յովակիմի եւ Աննայի յիշատակը տօնում է իւղաբեր կանանց հետ՝ Ս. Աստուածածնի վերափոխման հինօրեակին անմիջապէս յաջորդող Երեքշաբթի օրը:

[18] «Աղաւնաձորում օծուեց Ս. Աստուածածին մատուռը», *Էջմիածին*, Զ-Է:2001, էջ 32:

սրբալոյս միւռոնով նախ օծուեց եկեղեցու գմբէթին տեղադրուած խաչը, ապա վեհափառ հայրապետի հանդիսապետութեամբ աղօթքի եւ շարականների երգեցողութեամբ կատարուեց նաեւ եկեղեցու խորանին տեղադրուած խաչքարի օծումը:

Եկեղեցու օծման արարողութիւնից յետոյ տեղի ունեցաւ տօնախմբութիւն, որի ընթացքում ներկաներին շնորհաւորանքի խօսքեր ասաց նաւակատիքի առթիւ Աղաւնաձոր ժամանած ՀՀ Աժ նախագահ Արմէն Խաչատրեանը, ապա Սիւնեաց թեմի առաջնորդ Աբրահամ եպս. Մկրտչեանը, Վայոց Ձորի մարզպետ Պանդուխտ Մանուկեանը, Ռուսաստանի հայերի միութեան անունից՝ Սեդա Վերմիշեւանը եւ ուրիշներ[19]:

ՄԱՐՏԻՐՈՍԻ Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Վայոց Ձորի մարզի նորակառոյց եկեղեցիներից է Մարտիրոս գիւղի Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցին, որը գտնւում է 1866ին կառուցուած Ս. Աստուածածին (յայտնի է նաեւ «Ս. Երրորդութիւն Երկրորդ Երուսաղէմ» կամ «Ս. Վկայարան Երկրորդ Երուսաղէմ» անուններով) բազիլիկ եկեղեցու բակում: Կառուցուել է ամերիկաբնակ Թագուհի Չիլեանի հովանաւորութեամբ[20]: Նորակառոյց եկեղեցին օծուել է 2004ին:

ԳՆԴԵՎԱԶԻ Ս. ԵՂԻՇԷ ՄԱՏՈՒՌ

Վայոց Ձորի մարզի նորակառոյց քրիստոնէական պաշտամունքային կառոյցներից է Գնդեվազի Ս. Եղիշէ մատուռը: Այն կառուցուել է ճարտարապետ Սամուէլ Աղաջանեանի նախագծով եւ Սամուէլ Արսէնեանի բարերարութեամբ:

Ս. Եղիշէ մատուռի օրհնութեան կարգը 2013 Սեպտեմբերի 13ին կատարել են Ջերմուկի տարածաշրջանի հոգեւոր հովիւ, Գալուստ քահանայ Սահակեանը եւ Վայքի տարածաշրջանի հոգեւոր հովիւ, արժանապատիւ Մարտիրոս աւագ քահանայ Աւետիսեանը՝ Գագիկ սարկաւագ Յակոբեանի սպասաւորութեամբ: Օրհնութեան արարողութիւնը նախագահում էր Վայոց Ձորի թեմի փոխառաջնորդ, Զարեհ վրդ. Կաբաղեանը[21]:

---

[19] Նոյն:

[20] Հովանաւորի եւ եկեղեցու կառուցման հանգամանքների մասին մանրամասն տե՛ս՝ «Նուիրաբերուելը փրկութիւն է», *Բնորրան*, 1-3(14-16):2001-2003, էջ 240 կամ http://bnorran.am/?p=466 մատչում՝ 21.02.2020. նաեւ՝ «Եւս մի կոթող»՝ https://www.aravot.am/2001/06/20/791889/ մատչում՝ 21.02.2020:

[21] «Սբ. Եղիշէ մատուռի օրհնութիւնը Գնդեվազ գիւղում»՝ https://vayotsdzoritem.com/2013/09/13/%D5%BD%D5%A2-%D5%A5%D5%B2%D5%AB%D5%B7%D5%A5-%D5%B4%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%BC%D5%AB-

ԵԼՓԻՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

Մարզի նորակառոյց եկեղեցիներից է Ելփին գիւղում կառուցուած Ս. Սարգիս եկեղեցին: Այն նախագծել է ճարտարապետ Սամուէլ Աղաջանեանը, իսկ կառուցումը նախաձեռնել եւ հովանաւորել է ծնունդով ելփինցի գործարար, բարերար Սամուէլ Աւետիսեանը, որը բնակւում է Ռուսաստանի Նախոդկա քաղաքում: 2005ին կառուցուած եկեղեցու օծումը կատարուել է 2006ին[22]:

ՌԻՆԴԻ Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Վայոց Ձորի մարզի նորակառոյց եկեղեցիներից է Ռինդի Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցին: Եկեղեցու հիմնարկէքի հանդիսաւոր արարողութիւնը կատարուել է 2014 Ապրիլի 28ին: Այդ օրը Վայոց Ձորի թեմի առաջնորդ, Աբրահամ արք. Մկրտչեանի ձեռամբ սրբալոյս միւռոնով օծուեցին եւ Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցու հիմքում տեղադրուեցին տասնվեց վիմաքարերը:

Յաւարտ հիմնարկէքի արարողութեան ներկայացուեց համերգային ծրագիր, ելոյթ ունեցան երգի ու պարի համոյթներ: Ներկաներին ուղղուած խօսքով հանդէս եկան ՀՀ Վայոց Ձորի մարզպետ Էդգար Ղազարեանը, Ռինդի համայնքապետ Յուսիկ Սահակեանը, եկեղեցու բարերար Վարդան Սարգսեանը եւ իր մայրը՝ Ռինդի միջնակարգ դպրոցի վաստակաշատ ուսուցչուհի Ռոզա Կարապետեանը[23]: Բացի եկեղեցու կառուցման

%D6%85%D6%80%D5%B0%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%A3%D5%B6%D5%A4%D5%A5%D5%BE%D5%A1/, http://blog.ecolur.org/2013/09/%D5%BD%D5%A2-%D5%A5%D5%B2%D5%AB%D5%B7%D5%A5-%D5%B4%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D5%BC%D5%AB-%D6%85%D6%80%D5%B0%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8-%D5%A3%D5%B6%D5%A4%D5%A5%D5%BE%D5%A1/ մատչում՝ 21.02.2020:

[22] «Վայոցձորցի գործարարները եկեղեցիներ ու մատուռներ են կառուցում»՝ https://hetq.am/hy/article/67651 մատչում 21.02.2020:

[23] «ՀՀ Վայոց Ձորի մարզպետը մասնակցեց Ռինդ համայնքում կռուցուելիք եկեղեցու հիմնարկեքին»՝ http://vdzor.mtad.am/news/item/2014/04/28/491/ մատչում՝ 27.10.2021. նաեւ՝ Սիրան Սարգսեան, «Եկեղեցու հիմնարկէքի օրհնութեան կարգ Ռինդ համայնքում»՝

https://vayotsdzoritem.wordpress.com/2014/04/28/%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%b8%d6%82-%d5%b0%d5%ab%d5%b4%d5%b6%d5%a1%d6%80%d5%af%d5%a5%d6%84%d5%ab-

հիմնական բարերարից՝ Ռինդ համայնքի ղեկավար Սահակեանի ջանքերով համայնքի բնակչութիւնը դրամահաւաքի միջոցով, ինչպէս նաեւ տեղացի գործարար Սահակ Սարգսեանը, նոյնպէս մասնակցել են եկեղեցու կառուցման աստուածահաճոյ գործին:

Ռինդի Ս. Մարիամ Աստուածածին եկեղեցու օծման հանդիսաւոր արարողութիւնը կատարուել է 2021 Սեպտեմբերի 13ին, ձեռամբ Վայոց Ձորի թեմի բարեխնամ առաջնորդ, Աբրահամ արք. Մկրտչեանի: Հանդիսաւոր արարողութեան աւարտին սրբազան հայրը Ռինդի բնակիչներին, եկեղեցու բարերարներին ու ներկաներին փոխանցեց ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ.ի հայրապետական օրհնութիւնը: Եկեղեցու նաւակատեաց հանդէսին ներկայ էին Վայոց Ձորի մարզպետ Արարատ Գրիգորեանը, Արենի համայնքի ղեկավար Յուսիկ Սահակեանը, եկեղեցու կառուցման հովանաւորներ, բարերարներ Վարդան եւ Սահակ Սարգսեանները, մեծաթիւ հիւրեր: Այնուհետեւ հանդիսութիւնը շարունակուեց երգիչներ Աղասի Իսպիրեանի եւ Գոհար Յովհաննիսեանի, ինչպէս նաեւ համայնքի շնորհալի երեխաների գեղեցիկ երաժշտական ու պարային կատարումներով[24]:

Վայոց Ձորի մարզի նորակերտ եկեղեցիները հիմնականում կառուցուել են տեղական շինանիւթով՝ տուֆ, բազալտ, աւազաքար, համայնքների կենտրոնական կամ շրջապատի նկատմամբ իշխող բարձրադիր ու ազդու տեղանքում: Եկեղեցիների հիւրընկալ դռները միշտ բաց են ցերեկուայ ժամերին, գոցւում են երեկոյեան: Նորակառոյց եկեղեցիներից մնայուն քահանայ ունեցող եկեղեցիներն են. Վայքի Ս. Տրդատ եւ Ջերմուկի Ս. Գայիանէ եկեղեցիները, որտեղ որպէս խորհրդակատար հոգեւորականներ քահանայագործում են համապատասխանաբար Սեպուհ քհնյ. Յարութիւնեանը եւ Գալուստ քհնյ. Սահակեանը: Մարզի հաւատաւոր բնակչութեան հոգեւոր պահանջմունքների գոհացման եւ համայնքների հոգեւոր-մշակութային ու հասարակական կեանքի զարգացման գործում իրենց գնահատելի ներդրումն են ունեցել Եղէգնաձորի Ս. Աստուածածին եկեղեցու եւ Եղէգնաձորի տարածաշրջանի հոգեւոր հովիւ արժանապատիւ

%d6%85%d6%80%d5%b0%d5%b6%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%af%d5%a1%d6%80%d5%a3/ մատչում՝ 27.10.2021:

[24] «Նորակառոյց Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցու օծման արարողութիւնը Ռինդ բնակավայրում»՝ http://vdzor.mtad.am/news/item/2021/09/13/4416/ մատչում՝ 27.10.2021. նաեւ՝ «'Դարեր շարունակ հայ ժողովուրդը յաղթել է զէնքով ու հաւատով'. Ռինդում կայացաւ նորակառոյց Սուրբ Մարիամ Աստուածածին եկեղեցու օծման արարողութիւնը»՝ https://www.aravot.am/2021/09/14/1215422/ մատչում՝ 27.10.2021:

Վազգէն քինյ. Յովհաննիսեանը (այժմ՝ Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգեւոր հովիւ), Եղէգնաձորի Ս. Աստուածածին եկեղեցու ծիսակատար քահանաներ Ներսէս քինյ. Աշուղբաբեանը, Յովհաննէս քինյ. Մաթեւոսեանը (նաեւ՝ Խաչիկ համայնքի հոգեւոր հովիւ եւ ՀՀ զինուած ուժերի գնդերէց), Նորավանքի հոգեւոր հովիւ ու վանահայր Զարեհ վրդ. Կաբաղեանը, Նորավանքի խորհրդակատար քինյ. Ներսէս քինյ. Արշակեանը: Ինչպէս նշեցինք, Վայոց Ձորի թեմի վերոյիշեալ եւ նրանցից առաջ քահանայագործած Հայ Առաքելական Եկեղեցու հոգեւորականները (Կոմիտաս քինյ. Տիգրանեան, Սահակ քինյ. Մարտիրոսեան եւ այլք) ներգրաւուած են եղել ու իրենց գործուն մասնակցութիւնն են ունեցել մարզի հասարակական ու ներհամայնքային կեանքի տարբեր ոլորտներում իրականացուած աշխատանքներին, ինչպէս օրինակ՝ դեռեւս 2012 Հոկտեմբերին ՀՀ ամբողջ տարածքում, նաեւ Վայոց Ձորի մարզի մի շարք դպրոցներում անցկացուած հայոց գրերի գիւտին, թարգմանչութեանը եւ հայ տպագրութեան 500ամեակին նուիրուած միջոցառումներ, որոնց մասնակցում էին նաեւ Վայոց Ձորի թեմի հոգեւորականները[25]:

Մարզում կազմակերպուող շատ ազդեցիկ, տպաւորիչ ու գեղեցիկ միջոցառումներից են հայոց յաղթանակներին ու ազատամարտերին, հայ հերոսներին նուիրուած միջոցառումները: Այդպիսի մի միջոցառում էլ կազմակերպուել էր Ջերմուկի առաջին դպրոցում՝ նուիրուած արցախեան ազատագրական պայքարի ընթացքում զոհուած ջերմուկցի ազատամարտիկների յիշատակին[26]:

Ջերմուկում վերջին տարիներին մի շատ գողտրիկ աւանդոյթ է ձեւաւորուել, երբ համայնքից ու շրջակայ գիւղերից բանակ զօրակոչուող զինակոչիկները Ջերմուկի Ս. Գայիանէ եկեղեցում Գալուստ քահանայի ձեռամբ

---

[25] Տէր Գալուստ քահանայ Սահակեան, «Գրից մինչեւ գիրք. միջոցառում Ջերմուկի 1-ին հիմնական դպրոցում»՝
https://vayotsdzoritem.wordpress.com/2012/11/29/%d5%a3%d6%80%d5%ab%d6%81-%d5%b4%d5%ab%d5%b6%d5%b9%d5%a5%d5%be-%d5%a3%d5%ab%d6%80%d6%84-%d5%b4%d5%ab%d5%bb%d5%b8%d6%81%d5%a1%d5%bc%d5%b8%d6%82%d5%b4-%d5%bb%d5%a5%d6%80%d5%b4%d5%b8%d6%82%d5%af%d5%ab-1/ մատչում՝ 30.07.2022:

[26] Սիրան Սարգսեան, «Զոհուած ազատամարտիկներին նուիրուած միջոցառում Ջերմուկի 1-ին դպրոցում»՝
http://armchurch.info/diocese/%D5%A6%D5%B8%D5%B0%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%A1%D5%A6%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80%D5%BF%D5%AB%D5%AF%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB%D5%B6-%D5%B6%D5%BE%D5%AB%D6%80%D5%BE%D5%A1%D5%AE-%D5%B4%D5%AB%D5%BB/ մատչում՝ 30.07.2022:

Աստծոյ օրհնութիւնը ստանալուց յետոյ են մեկնում հայոց բանակ ծառայութեան՝ համալրելով հայրենիքի պաշտպանների կուռ շարքերը: Այդ օրը, ձեւաւորուած աւանդոյթի համաձայն, նորակոչիկներին նուիրւում են օրհնուած խաչեր եւ աղօթագրքեր: Նորակոչիկներին իրենց շնորհաւորանքի եւ բարի ծառայութեան մաղթանքի խօսքերն են յղում նաեւ համայնքի բնակիչները, ծնողները, վետերանները, ոստիկանութեան ներկայացուցիչներն ու դպրոցականները[27]:

Բանակ-հասարակութիւն կապն ամրապնդելու շրջանակներում յաճախակի են կազմակերպւում զինուոր-ծնող հանդիպումներ:

Այդպիսի մի հանդիպում էլ 2015 Նոյեմբերի 5ին Արարատի մարզպետարանում էր կազմակերպուել, որի ընթացքում կայացաւ ՀՀ պաշտպանութեան նախարարութեան 4րդ բանակային զօրամիաւորման 21 զինուորների հանդիպումը իրենց ծնողների հետ, որտեղ պահպանիչ աղօթք կարդաց միաւորման հոգեւոր սպասաւոր Գալուստ քհնյ. Սահակեանը[28]:

Եկեղեցի-հասարակութիւն սերտ յարաբերութիւնների իւրօրինակ դրսեւորումներից է ՀՀ բանակի մարտիկների համար կազմակերպուող հոգեւոր-հայրենասիրական թեմաներով զրոյցներն ու քննարկումները: Այդպիսի ուսանելի օրինակ է ՀՀ զինուած ուժերի 4րդ զօրամիաւորման աւագ գնդերէց Գալուստ քհնյ. Սահակեանի կարդացած դասախօսութիւնը հայոց բանակի կին զինծառայողների համար[29]:

Հայոց բանակին Հայաստանում եւ Արցախում իրենց նուիրեալ ծառայութիւնը բերած նախկին ու ներկայ գնդերէցների սխրանքն անգնահատելի չի մնացել: Նրանց յայտնել են երախտագիտութիւն՝ յորդորելով նոյն ոգով շարունակելու իրականացնել իրենց հոգեխնամ սպասաւորութիւնն այս ծանրագոյն պայմաններում, երբ շարունակելու են սփոփել զոհուածների հարազատներին, ոգեւորելու են վիրաւորներին եւ անդադար աղօթքով հայցելու են Տիրոջից՝ գերեվարուած հայորդիների շուտափոյթ վերադարձը: Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարի հրամանով Արցախի Հանրապետութիւնում ծաւալուած պատերազմական գործողութիւններին գործուն մասնակցելու համար 2021 Յունուարին մի շարք եկե-

---

[27] «Ջերմուկից ծառայութեան մեկնեց նորակոչիկների հերթական խումբը»՝ https://blognews.am/arm/news/335699/jermukic-tsarayutyan-meknec-norakochikneri-hertakan-khumby-fotoreportazh.html մատչում՝ 30.07.2022:

[28] «Կայացաւ զինուոր-ծնող հերթական հանդիպումը»՝ https://m.shamshyan.com/hy/article/2015/11/06/69699/ մատչում՝ 30.07.2022:

[29] «4-րդ զօրամիաւորման աւագ գնդերէց Տէր Գալուստ քահանայ Սահակեանը դասախօսութիւն է անցկացրել կին զինծառայողների համար»՝ https://mil.am/hy/news/8255?fbclid=IwAR2DtW-0Cbnc9dwEtI6XLJOOCi-1JIZ1Gd23f8D3xkS9aRZqGiy5ZASU1ss մատչում՝ 30.07.2022:

ղեցականներ արժանացան նախարարութեան պարգեւների, որոնց թւում նաեւ աւագ գնդերէց Գալուստ քինյ. Սահակեանը պարգեւատրուեց «Անդրանիկ Օզանեան» մեդալով[30]:

Վայոց Ձորի թեմի հոգեւորականությունն իր գնահատելի գործունէութեամբ մասնակցել է Սուրբ Էջմիածնի եւ Վայոց Ձորի թեմի իրականացրած բարեգործական, մարդասիրական միջոցառումներին (յատկապէս՝ 2020–21ին): Նմանօրինակ միջոցառումներից էին Գլաձոր համայնքի անապահով ընտանիքներին եւ Եղէգնաձորի ցերեկային խնամքի կենտրոնի սաների ընտանիքներին տրամադրուած նիւթական-պարենային աջակցութիւնը, Վայոց Ձորի թեմի առաջնորդ Աբրահամ արք.ի նախաձեռնութեամբ եւ օրհնութեամբ ու բարերար տիկին Դիանա Հաճէթեանի նիւթական օժանդակութեամբ, Նորավանքի ուխտի օրուան ընդառաջ, Եղէգնաձորի բժշկական կենտրոնի 23 աշխատակիցների եւ մարզի անապահով 27 ընտանիքներին տրուած սննդի ծանրոցները: Առաջնորդ սրբազան հօր կողմից Եղէգնաձորի բժշկական կենտրոնի բոլոր հիւանդասենեակների համար նուիրաբերուել են սրբապատկերներ, իսկ այդ պահին հիւանդանոցում բուժուող հիւանդներին՝ Աստուածաշունչ: Թեմի կողմից տրուող մարդասիրական հերթական օգնութիւնն է բաժանուել Եղէգնաձորի տարածաշրջանի հոգեւոր հովիւ Վազգէն քինյ. Յովհաննիսեանի եւ թեմի Երիտասարդաց միութեան ատենապետ բարեշնորհ Գագիկ սարկաւագ Յակոբեանի ձեռքով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ Վայոց Ձորի թեմը, համագործակցելով Վայոց Ձորի մարզպետարանի եւ մարզի 8 համայնքների (6ը՝ խոշորացուած) հետ, կորոնավիրուսի հետեւանքով ստեղծուած իրավիճակը յաղթահարելու նպատակով մարզի կարիքաւոր, 4 եւ աւելի անչափահաս երեխաներ ունեցող բազմազաւակ ընտանիքներին ցուցաբերել է պարենային օգնութիւն[31]:

---

[30] «Բանակի օրուայ առիթով կատարուեց հանրապետական մաղթանք»՝ https://hetq.am/hy/article/126834 . նաեւ՝ «Հանրապետական մաղթանք՝ բանակի օրուայ առիթով. Գարեգին Բ.ն «Սուրբ Ներսէս Շնորհալի» շքանշան յանձնեց մի շարք զինուորականների»՝ https://news.am/arm/news/626124.html մատչում՝ 30.07.2022:

[31] Աւելի մանրամասն տե՛ս՝ https://vayotsdzoritem.wordpress.com/category/%d5%a5%d5%b2%d5%a5%d5%a3%d5%b6%d5%a1%d5%b1%d5%b8%d6%80%d5%ab-%d5%bf%d5%a1%d6%80%d5%a1%d5%ae%d5%a1%d5%b7%d6%80%d5%bb%d5%a1%d5%b6%d5%ab-%d5%b0%d5%b8%d5%a3%d6%87%d5%b8%d6%80-%d5%b0%d5%b8%d5%be%d5%ab/ մատչում՝ 30.07.2022:

Սահմանպահ Խաչիկ բնակավայրին Հայ Առաքելական Եկեղեցու Վայոց Ձորի թեմը բարեգործական ձեռնարկումների շրջանակում տրամադրել է 3 տոննա գարու սերմացու: Խաչիկցիներին գարու սերմացուի տրամադրումը Վայոց Ձորի մարզում կորոնավիրուսի հետեւանքները մեղմելուն ուղղուած հերթական թիրախային օժանդակութիւնն էր, որն իրականացուել է թեմի առաջնորդ, Աբրահամ արք.ի նախաձեռնութեամբ[32]:

Կորոնավիրուսի հետեւանքով ստեղծուած իրավիճակը յաղթահարելու նպատակով Մայր Աթոռի եւ Վայոց Ձորի թեմի կողմից Ջերմուկ համայնքի ընկերային անապահով շուրջ 45 ընտանիքներին, որոնք նախորդ փուլում ծրագրից դուրս էին մնացել, արդէն 2րդ փուլով տրամադրուել են 30 կիլոգրամանոց սննդի փաթէթներ[33]:

Վայոց Ձորի թեմի բազմերախտ ձեռնարկումներից էր 2020ի արցախեան դժնդակ պատերազմի օրերին Արցախից տարագրուած ընտանիքներին Վայոց Ձորի թեմապատկան կառոյցում ապահով ապաստան եւ սնունդ տրամադրելու գործը[34]:

Վայոց Ձորի թեմի կրթական-լուսաւորական կեանքի նշանակալից իրադարձութիւններից է մարզի տարածքում պարբերաբար կազմակերպուող վերապատրաստման դասընթացները մարզի հանրակրթական դպրոցներում Հայ Եկեղեցու պատմութիւն դասաւանդող ուսուցիչների հա-

---

[32] «Վայոց Ձորի թեմը սահմանապահ Խաչիկ բնակավայրին տրամադրեց 3 տ գարու սերմացու»՝ https://vayotsdzoritem.wordpress.com/2020/04/14/%d5%be%d5%a1%d5%b5%d5%b8%d6%81-%d5%b1%d5%b8%d6%80%d5%ab-%d5%a9%d5%a5%d5%b4%d5%a8-%d5%bd%d5%a1%d5%b0%d5%b4%d5%a1%d5%b6%d5%a1%d5%ba%d5%a1%d5%b0-%d5%ad%d5%a1%d5%b9%d5%ab%d5%af-%d5%a2%d5%b6%d5%a1%d5%af/ մատչում՝ 30.07.2022:

[33] «Աջակցութիւն Ջերմուկ համայնքի սոցիալապէս անապահով (45) ընտանիքներին»՝ https://vayotsdzoritem.wordpress.com/category/%d5%bb%d5%a5%d6%80%d5%b4%d5%b8%d6%82%d5%af%d5%ab-%d5%bf%d5%a1%d6%80%d5%a1%d5%ae%d5%a1%d5%b7%d6%80%d5%bb%d5%a1%d5%b6%d5%ab-%d5%b0%d5%b8%d5%a3%d6%87%d5%b8%d6%80-%d5%b0%d5%b8%d5%be%d5%ab%d5%be/ մատչում՝ 30.07.2022:

[34] «Արցախից ժամանած ընտանիքները ապահով ապաստան են ստացել Վայոց Ձորի թեմապատկան կառոյցում»՝ https://vayotsdzoritem.wordpress.com/2020/10/21/%d5%a1%d6%80%d6%81%d5%a1%d5%ad%d5%ab%d6%81-%d5%aa%d5%a1%d5%b4%d5%a1%d5%b6%d5%a1%d5%ae-%d5%a8%d5%b6%d5%bf%d5%a1%d5%b6%d5%ab%d6%84%d5%b6%d5%a5%d6%80%d5%a8-%d5%a1%d5%ba%d5%a1%d5%b0%d5%b8%d5%be-%d5%a1/ մատչում՝ 30.07.2022:

մար: Այդպիսի հերթական վերապատրաստման դասընթացներից մէկն էլ Հայաստանի Աստուածաշնչային ընկերութեան եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնէական դաստիարակութեան կենտրոնի համագործակցութեամբ 2020 Փետրուարի 20ին Եղէգնաձորի «Գիտելիք» համալսարանում կազմակերպուած Վայոց Ձորի մարզի «Հայոց եկեղեցու պատմութիւն» դասանիւթի (ՀԵՊ) ուսուցիչների վերապատրաստման սեմինարն էր, որին մասնակցում էին նաեւ Վայոց Ձորի թեմի հոգեւորականները[35]:

Վայոց Ձորի մարզում կազմակերպուող հրաշալի ու մարդաշատ միջոցառումներից է Նորավանքի ուխտի օրը: Մեծահռչակ վանական համալիրի ուխտի օր է հռչակուել Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակին: Այդ օրը, բացի աւանդական ուխտի պատարագից, մատաղօրհնէքից ու հիւրասիրութիւնից, տեղի են ունենում գեղարուեստական բազմաբնոյթ միջոցառումներ՝ համերգ, ցուցահանդէս-վաճառք, մրցելոյթներ, զուարճախաղեր ու այլ հանդիսութիւններ, վանական համալիրի տարածքի մաքրման ու բարեկարգման աշխատանքներ[36]:

Այսպիսով՝ 1991ից յետոյ նորանկախ ՀՀում հայկական եկեղեցական ճարտարապետութիւնը վերածնունդ, ապա նաեւ վերելքի նոր շրջան ապրեց: Ժամանակակից հայ ճարտարապետերն ու վարպետ-շինարարները, կիրառելով նոր արհեստագիտական միջոցներ, լուծումներ ու մտայղացումներ, նորակառոյց եկեղեցիները, այդ թւում նաեւ Վայոց Ձորի մարզի եկեղեցիները, բացառապէս նախագծում եւ կառուցում են՝ պահպանելով ու զարգացնելով հայկական միջնադարեան եկեղեցական ճարտարապետութեան լաւագոյն աւանդները: Վայոց Ձորի թեմի նորակառույց եկեղեցիներում քահանայագործող Հայ Առաքելական Եկեղեցու նուիրեալ հոգեւորականները ներգրաւուած են ու իրենց գործուն մասնակցութիւնն են ունենում մարզի հասարակական ու ներհամայնքային կեանքի տարբեր ոլորտներում իրականացուող աշխատանքներին:

---

[35] «Վայոց Ձորի մարզի «Հայոց եկեղեցու պատմութիւն» առարկայի ուսուցիչների վերապատրաստման դասընթաց»՝ https://vayotsdzoritem.wordpress.com/2020/02/21/%d5%be%d5%a1%d5%b5%d5%b8%d6%81-%d5%b1%d5%b8%d6%80%d5%ab-%d5%b4%d5%a1%d6%80%d5%a6%d5%ab-%d5%b0%d5%a1%d5%b5%d5%b8%d6%81-%d5%a5%d5%af%d5%a5%d5%b2%d5%a5%d6%81%d5%b8%d6%82-%d5%ba%d5%a1%d5%bf%d5%b4/ մատչում՝ 30.07.2022:

[36] «Կանաչ Կիրակին՝ Նորավանքի ուխտի օր»՝ https://vayotsdzoritem.wordpress.com/2019/05/06/%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A1%D5%B9-%D5%AF%D5%AB%D6%80%D5%A1%D5%AF%D5%AB%D5%B6%D5%9D-%D5%B6%D5%B8%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%B8%D6%82%D5%AD%D5%BF%D5%AB-%D6%85%D6%80-4/ առ 30.07.2022:

Վայքի Ս. Տրդատ եկեղեցու Սուրբ Յարութիւն խաչքար-յուշակոթողը, հեղինակ՝ խաչքարագործ-վարպետ Վարազդատ Յարութիւնեան

THE CHURCHES BUILT IN THE VAYOTS DZOR REGION BETWEEN 2000 AND 2021

(Summary)

ARMAN MANUK MALOYAN (armanmaloyan@mail.ru)

The architectural school of Sunik holds an outstanding place in the history of Medieval Armenian architecture, with its talented architects, master builders and khachkar masters. Indeed, some architectural monuments of the Sunik school elevated medieval Armenian Church architecture to new levels.

Since the early 1990s Armenian Church architecture has experienced a revival, and a renaissance, as the building of churches and religious monuments were forbidden during the Soviet era. However, after 1991 modern Armenian architects and master builders revived the best traditions of medieval Armenian Church architecture and applied new technologies, solutions and ideas in designing and constructing new churches.

The paper is the second in a series that focuses on the new religious constructs that were built after the proclamation of the Republic of Armenia in 1991. It highlights the newly built churches and chapels of the Vayots Dzor region of Armenia, namely Surp Terdat Church in Vayk, Surp Anna Church in Malishka, Surp Mariam Church in Aghavnadzor, Surp Mariam Astvatsatsin Church in Martiros, Surp Yeghishe Chapel in Gendevaz, Surp Sargis Church in Yelpin, Surp Gayane Chapel in Kechut, Surp Gayane Church in Jermuk, and Surp Mariam Astvatsatsin Church in Rind. The paper describes the architectural forms of the above-mentioned churches and chapels, the history of their construction and other relevant issues.